ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«15» մարտի 2018թ No 674-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման 17-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը և հիմք ընդունելով «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0101036118 առ 14.03.2018թ. գրությունը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել թվով 1 դեղի գրանցման հավաստագրի վերաձևակերպումը՝ համաձայն հավելվածի:

2. «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Թոփչյանին՝

1) հնգօրյա ժամկետում ապահովել դեղի վերաձևակերպված գրանցման հավաստագրի ներկայացումը ՀՀ առողջապահության նախարարություն.

2) սահմանված ժամկետում ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի վերաձևակերպված գրանցման հավաստագրերի տրամադրումը հայտատուներին՝ որպես վերաձևակերպված հավաստագրի ուժի մեջ մտնելու ժամկետ նշել սույն հրամանի տրման օրը.

3) մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) ներառելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարություն ներկայացնել նախորդ ամսվա ընթացքում պետական գրանցում ստացած դեղերի ցանկը:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ առողջապահության նախարարի
2018 թվականի մարտի 15 - ի

N 674 – Ա հրամանի

# ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

| հ/հ | Առևտրային անվանումը | միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները | դեղաձևը | դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը) | արտադրող ֆիրման | երկիրը | գրանցման հավաստագրի իրավատեր | բացթողման կարգը | եզրակացության համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սոլիան | ամիսուլպրիդ | դեղահատեր բաժանելի թաղանթապատ | 400մգ; (30/3x10/) բլիստերում | Դելֆարմ Դիժոն, 6, Բուլվար դե լ՝ Յուրոպ 21800, Քետինյի | Ֆրանսիա | Սանոֆի-Ավենտիս Ֆրանս, 82 ավենյու Ռասպայլ, 94250 Ջենթիլի, Ֆրանսիա | Դ | 16176 |